ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 325 - Ա

28 դեկտեմբերի 2018 թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1177 գրությունը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային կապի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի.

2) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային ինժեներական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

3) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային բժշկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի.

4) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային տրանսպորտային ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի.

5) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային առևտրի և սննդի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի.

6) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային էներգետիկայի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի.

7) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի.

8) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային հասարակական կարգի պահպանման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 8-ի.

9) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային նյութատեխնիկական մատակարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 9-ի.

10) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային կոմունալ տեխնիկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 10-ի.

11) քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային բնակչության հատուկ սպասարկումների ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 11-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ